

ՅՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱՌՈՒ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ՆՈՐ ՍՏԱՑԿԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ

№ 19

Ա. Ի. Ե. Տ. Ա. Ր. Ա. Ն.

Թերթեր՝ 318.— Պրակներ՝ 26, յուրաքանչյուրը 12 թերթից (միայն առաջին պրակը՝ 15 թերթից)։— Մեծուրյունը՝ $17 \times 13 \times 9$ ։— Նյութը՝ դեղնած հաստ թուղթ։— Կազմը՝ կաշեպատ տախտակ։— Վիճակը՝ բավարար (կազմը փոքր ինչ բայթալված, վերջում մի քանի թերթ ընկած է)։— Գրությունը՝ երկայուն։— Գիրը՝ բոլորգիր։— Տողերը՝ միջին հաշվով 19։— Զարդագրություն՝ կան տերևական և սրբերի նկարներ, լուսանցազարդություններ, կիսախորաններ, խորաններ և ավետարանիչների նկարներ։— Գրիչը՝ Զարաբիա։— Պատվիրատուն՝ Իսրեկի։— Ժամանակը՝ 1509 թ.։— Գրչության վայրը՝ Վան։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 317թ.—...Արդ, յանգ ելեալ կատարեցաւ սուրբ աւետարանս, և բերանս Քրիստոսի և քարոզս Յիսուսի Տեառն Աստուծոյ մերոյ, ի քաղաքս Վան, ընդ հովանեաւ սրբազան առաքելոցս Պետրոսի և Պողոսի, ձեռամբ Ջաբարիայ սուտանուն երիցոյ, ընդ հովանեաւ սրբոցս կատարեցի զսուրբ աւետարանս՝ մեղսամած մատամբս յաւրինեցի, միթէ քաւ մեղս ի մարմնի ի թուական Հա(յ)կազեան տոմարիս ԶԾԸ (1509), ի հայրապետութեան Տեառն Բ (երկու) կաթողիկոսացս՝ Սղիշէի և Ատոմի, և մերոյ աթոռակալի սուրբ ուխտիս Վարդապայ՝ Ատոմ և Գրիգոր վարդապետացս, և Գրիգոր և Սահակ եպիսկոպոսացս, և յերկրակայութեան Վանայ երկրիս՝ Միրզէհիտիս, և ի փաթշահութեան Թարիգոյ՝ Թաղթին Շախ Իսմայիլի կարմիր գդակի։ Արդ՝ աղաչեմք զմանկունսդ սուրբ եկեղեցոյ, յիշեցէք ի Քրիստոս և ի սուրբ յաղաթս ձեր՝ զստացոյ սուրբ աւետարանիս՝ զԻսրէկէն, և զծնողսն իւր զԱմիր բէկէն, և զԳուստանն, և զկիսն իւր՝ զԹուրանդէն, և զեղբայր իւր... (կտրված է)։ Եւ մի ոք ի(շ)խնացէ հեռացուցանել զսա ի դրանէ սուրբ վարդապետին՝ գողանալով, ծախելով վամ գրաւելով՝ ո՛չ ի յիւրոցն և ո՛չ ի յ(օտա)րացն։ Եւ եթէ ոք յանդգնի և առնէ, նա պատժի յԱստուծոյ և ի սուրբ վարդապետին, ամէն։ Արդ՝ երես անգեալ աղաչեմ զձեզ յիշման արժանի արարէք և զիս զմեզ... (թերթը ընկած է)։

1. Սկիզբը մայիս-հունիս և հուլիս-օգոստոս համարներում։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.— Փառք ամենատուր երրորդութեան...

Որ ետուր կարաւորեալ յոգնայմեղ ստացաւ սուրբ աւետարանիս իմ՝ Ալահգատն և կողակիցն իւրոյ Նանամին (Շ)՝ ախուլիս և որդոցն Տէր Աբրահամին, Բարխուդարին, Մուրատին և թոռներին իմոյ Տէր Աբրահամին, Քաղուրաթին, Նիգարգարին, Ըսքանոսին, Աստուածատուրին, զնոյալ Յեսայուն... Այլշին, Խուր-նիկարին, Շադանէին, և հարսներին իմոյ Զամիլիթին, Բաթղ-Սաւթանին, Փէրինին և ամենայն ար(ե)ան մերձատուրացն իմոյ արհմեալ եղիցի, ամէն։ Աստուած օրհնէ զսօշայ Մուրատն, զԱղուրաթն... և ինձ՝ անարժան Յակոբ իրիցոյս...

Թ. 161ա.— Զանաթանս գրիւս Զաբարիա և զծնողսն իմ յիշեցէք ի Քրիստոս։

Թ. 248թ.— Զմեղուցեալ զԶաբարիայ գրողս և զծնողսն իմ յիշեցէք ի Քրիստոս, և Աստուած զձեզ յիշէ, ամէն։

Թ. 250թ.— Սուրբ աւետարանացն՝ բարեխառութեամբ փրկ(ե)ալ ի փորձութենէ՝ Մուրատն, Քաղուրաթն, Նիգարգարն, Տէր Աբրահամն և զիս՝ Յակոբս, ամէն։ Թվականիս հայոց ՌԳ (1555), եղաւ ի դաւղս, որ կոչի Զուղայ, ընդ հովան(ե)աւ Սուրբ Աստուածածին և Սուրբ Սարգիս զաւարվալիս, ամէն։

№ 20

ՅԱՅՄԱՐԱՌԻՐ

Թերթեր՝ 310։— Պրակներ՝ 25, յուրաքանչյուրը 12 թերթից, բացառութեամբ մեկ պրակից, որ 10 թերթից է։— Մեծուրյունը՝ $38 \times 25 \times 9$ ։— Նյութը՝ հաստ դեղնագույն թուղթ։— Կազմը՝ կաշեպատ տախտակ։— Զննագրի վիճակը՝ բավարար, առաջից 2 թերթ պակասում է։— Գրությունը՝ երկայուն։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդագրություն՝ վերնագրերը թունազիր, լուսանցքներում ծաղկազարդ նկարներ։— Ժամանակը՝ Ժէ դար։— Գրիչը՝ Հակոբ բահանա։— Պատվիրատուն՝ Մկրտիչ։

ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ ՄԻՐԱՔ ԹԱՌԻԳԵՑԻՈՅ

Թ. 99թ.—101ա.— Յայտմաւոր պատմութիւն և յիշատակ է քաջ նահատակին Միրաքի թաւրիգեցոյն։ Երանելի աւագն Միրաք՝ էր ի մեծ քաղաքէն և անուանի շահաստանէն, Թաւրի-հոյ, զաւակ բարի ծնողաց, ազգաւ հայ և հաւատով քրիստոնեայ, բարեպաշտ և երկիրաւ յԱստուծոյ, բարեմիտ և ողորմած, այցելու որբոց և այրեաց, ասպնջական օտարաց և անծանօթ հիւրից, զգնացուցանող մեկրոց և լցուցանող քաղցիւրոց, սիրող եկեղեցականաց՝ և պատրուղ տունախմբութեանց։ Եւ էր ախոյեան մեծ աղգիս հայոց ի

դրան արքայիցն տաճկաց եւ բազում ոգիս ի գերեզման Վրացտանայ՝ արս եւ կանայս, ծերս եւ տղայս գնեալ ոսկով եւ արծաթով ի յանօրինացն եւ թափեալ ազատեաց զնոցա՝ գնալ ի տեղիս իւրոց։ Եւ արար բազում արդիւնս եկեղեցեաց եւ վանօրէից։ Եւ զեկեղեցիք քաղաքին, զոր քակեցին ալլազգիքն ի ժամանակս Զրհանշային, նա բազում կաշառաւորութեամբ իշխանացն եւ պարոնացն դարձեալ շինել ետ քակողացն։ Եւ յետոյ, բազում անգամ ջանացիչ, քակել մօլնաքն եւ նա անխնայ ցրուէր զգանձն իւր ի դուռն արքունի, եւ խափանէր զշար խորհուրդս նոցա։ Ընդ որ մախանային շար ազգն պարսից եւ սպասէին արեան նորա։

Եւ յաւուր ծաղուպ փատշահին Թաւրիզոյ, որոյնց Ուզոն Հասանին, էր այր մի Մէհթի անուն, որ հրաման ունէր ի փատշահէն՝ թէ զամէն, զոր ինչ եւ արասցէ կամք, եղիցի իւրն՝ թէ խել, թէ զրկէ, թէ ծեծէ, մի՛ ոք հաւառակեցցի նմա, եւ մի՛ մտցէ ի դատաստան գործք նորա, զոր ինչ եւ արասցէ նա։ Վասն որոյ, զրգոցցին զնա շար ազգն պարսից սպանանի, զաւագն Միրաք։ Իսկ մեծն Միրաք ընդ քարի գործոցն եւ ընդ ուղղափառ հաւատոցն, զոր ունէր եւ մահուամբն եւ արժանացաւ նմանիլ տան իւրոյ։ Զի ի մեծի աւագ շաքաթուն լծակից եղեւ շարշարանացն Քրիստոսի եւ մահուամբն՝ կցորդ մահու նորա։

Զի յաւուր չորեքշաբթին արարին անօրէնքն ի միջի իւրոց խորհուրդ սպանման նորատուպ Յուլայ ընդ հրեայսն։ Եւ յաւուր հինգշաբթին հաղորդեցաւ ի կենարար մարմնոյ եւ յարեմէ Տեառն, ըստ խորհրդոյ առաքելոցն ի սուրբ վերնատան եւ յաւուր յաւագ ուրբաթուն, որ օր ԻԴ (24) էր մարտի ամսոյն, ի վեցերորդ ժամուն, որ կայր բեւեռեալ Տէրն ի վերայ խաչին։

Ի նոյն ժամուն հեծեալ Մեհթին այն ի ձի եւ ածեալ ի մէջ զսուսերն իւր եւ եկեալ փշովայն, եկաց առաջի խանութի Միրաքին եւ ասէ. Դարձիր ի Քրիստոսէ եւ տուր փառք պատգամաբերին մերոյ։ Ասէ Միրաքն. Փառք փառաւորեալ անուան Քրիստոսի յամենայն ժամ։ Եւ որչափ ստիպէր զնա պեղծն այն, Միրաքն եւս առաւել փառաբանութիւն մատուցանէր Աստուծոյ որպէս զաւագակն յաւակողման ի նմին ժամու զՔրիստոս Աստուծոյ դաւանէր եւ որդի Աստուծոյ։ Վասն որոյ թրածեծ արարեալ պղծոյն զգլուխն եւ զյուսն եւ զբազուկ սրբոյն։ Եւ ապա լիջեալ յերկաթեմ, եւ որպէս զգառն անմեղ, դանակաւ զննեաց զնա ի խանութին իւր, եւ ամբարձեալ զպատուական գլուխ սրբոյն ի ծայրս սուսերին իւրոյ եւ քարձրացուցեալ ի տեսութիւն բազմութեան շովկային ըստ

բարձրացելոյն ի քառասայր սուսեր խաչին։ Եւ տարեալ ընդ շովկայսն, ընկեցին ի դուռն մօր փատշահին։

Եւ յաշնամանէ համարձակութիւն առին պեղծ ազգն պարսից, եւ գոհ տուեալ միաբան դիմեցին ի վերայ եկեղեցոյն՝ առ ի քակել զնա։ Եւ քրիստոնէիցն փութացեալ զաղաղակ բարձին ի դուռն բակումին։ Եւ նա փութով աղաբարեալ որդոյն իւրոյ փատշահին։

Եւ նա նոյն ժամայն առաքեաց իշխան մի՛ զօրօք Վէլի անուն, որ էր դունապան իւր առ որ եկեալ նետալից զամենեսեան փախստական արար եւ զեթոյց զեկեղեցիսն։ Զոր երկուցեալ Մէհթին յայսպիսի աղմկացս, փախստական եղեւ։ Եւ հրաման արար փատշահն ծառայից իւրոց հեծնուլ յարձունի երկվարան եւ հասանել նմա։ Եւ թէ՛ որ փութով հասանէ նմա եւ ըմբռնէ զնա եւ բերցէ առ իւս, ասէ, երկվարն իմ կահուքն իւրովք նմա լիցի։ Եւ հասեալ նմա ի նմին ժամու եւ կալեալ կապեցին զնա, եւ բերեալ արկին ի բանտ, զի երեկոյացեալ էր ժամն։ Իսկ զպատուական գլուխն եւ զմարմին մեծին Միրաքի, եկեալ բարձին ծառայքն իւր եւ տարան յեկեղեցին։

Առ որ ժողովեցան բազմութիւնք քահանայից եւ կրօնաւորաց եւ վարդապետն Յակոբ ի Սուրբ Թաղէոսի առաքելոյն վանացն, որ եկեալ էին ի քաղաքն վասն մեծի տօնի Զատիկին։ Եւ եղեալ առաջի զմարմինն Միրաքի յերեկոյի ժամուն ի մօտս մեծին շաքաթ գիշերին եւ հսկմամբ պաշտօն արարին մինչեւ ի լուսնաւ առաւօտին։ Եւ զամենայն երգս մեծի աւագ շաքաթի ճրագաւուցի թաղման Տեառն ի վերայ նորա վատարեցին։ Եւ ընդ ծագել արեւուն բարձին զմարմինն մեծաւ փառք ամենայն բազմութիւն քրիստոնէից քաղաքին եւ տարեալ եղին ի տապանի՝ սաղմոսիք եւ աւրհնութեամբ։ Եւ զի որպէս կցորդ եղեւ երանելին նահատակս շարշարանաց եւ մահուան Տեառն յաւուր ուրբաթին, նորպէս եւ հաղորդ եղեւ թաղման Տեառն, յաւուր շաքաթին, որ է օր հանգրտեան ի փառս Արարչին, որոյ յիշատակ նորին աւրհնութեամբ եղիցի։

Իսկ զպեղծն զայն Մէհթի, զոր ըմբռնեցին, ի վաղին ետ բերել փատշահն առաջի իւր եւ ասէ. Ո՞յր հրամանաւ սպաննեի զմեծն հայոց զՄիրաք։

Եւ նա ասէ. Ոչ ուրուք հրամանաւ, բայց զի ընտրեմեցաւ ինձ, եւ ոչ երես փառս անօրէն առաջնորդին մերոյ։

Ասէ փատշահն. Ո՛չ այդպէս, այլ զի զկապքո արձակեցաք եւ թողաք զքեզ ի վրամա տապանաւ, վասն այնորիկ համարձակեալ արարեի զայդ։ Եւ առեալ լի քարկութեամբ

աղիւս մի թրծեալ եւ հարեալ սրտմտութեամբ յերես պղծոյն եւ ջարդեալ խորտակեալ զպատկեր նորա: Եւ ամէն զօրականքն հրամանաւ արքային ի վերայ յարձակեալ, քարիւ եւ փայտիւ հարեալ, սատակեցին զնա: Եւ ետ փատշահն կտրել զգլուխ նորա: Եւ առաքեաց առ որդի Միրաքին եւ ասէ. Տե՛ս թէ ո՞րպէս արի զվրէժս ի թշնամոյն եւ հատի շարաշար զգլուխ սպանողին հօր քո: Եւ սպաս տարեալ կախեցին ի մէջ շուկային, եւ զմարմին պղծոյն ընկեցին արատաւոյ քաղաքին, զի շուկն եւ հաւք կերիցեն զնա:

Եւ էր մեծ իշխան մի, նոյն ծաղուպ փառաշահին, Հասում անուն, զոր մեծարեալ էր եւ կացուցեալ զեւրաղար հօրն իւրոյ Հասան փատշահին: Եւ առանց նորա դատաստան ոչ լինէր ի դրանն արքունի: Եւ նա կարի ի խոր խոցեցաւ, մանաւանդ յորժամ հտնա զՄիրաքն, որ այնպէս մեծարանօք բարձեալ թաղեցին, եւ զՄեհթին այնպէս փայտառակ սպանեալ յարտաքս ընկեցին: Վասն որոյ եւ լեալ արտաքս ի նոյն օր մեծի շաքաթուն, եւ ժողով արարեալ արանց իբր Ռեաց (20.000) եւ նոքօք բարձեալ զպղծոյն մարմինն թաքուցով ի վերայ գլխոց իւրոց, եւ տանէին ի թաղել: Եւ բարձրաձայն եղանակաւ աղաղակէին եւ շէհիտ կարգային զանուն նորա, այսինքն թէ՛ մարտիրոս եղեւ ի ձեռաց անօրինաց: Զոր իմացեալ փատշահն ծաղուպ եւ յուղարկեաց նարձեալ զնոյն Վէլիբէկն զօրօք, որ զնացեալ նախ զփակեղս գլխոց նոցա ժողովեցին, որք լիսան սգոյ պղծոյն սատակման փոխեալ էին ի կապուտ: Եւ այնպէս առհասարակ զամենեւեան գրնդացուցին եւ գլխիւրաց արարին: Եւ ապա փայտիւ ջարդեալ զկառափուտս նոցա ցրուեցին, եւ հարեալ խորտակեցին զպղծոյն թաքուցման ոսկերօքն եւ ընկեցին յերկիր: Եւ կալեալ զիշխանն Հասում Ե (5) մեծամեծ աշխրով եւ ածին առաջի փատշահին: Եւ ասէ ցնա փատշահն բարկութեամբ. Ով շարագլուխ, զատեցեալն եւ զնախատանօք զսպանեալն յինէն որպէ՛ս իշխեցեր այնպէս գերագոյն փառօք մեծարել: Եւ հարեալ ինքն զուս նորա սրով ընդ վիզն եւ սպան զնա: Իսկ զսայիդներուն քերթել երես դճակատն երեսովն եւ կտրեալ զկապ բերանոցն, եւ այնպէս փայտառակ եղեալ ի վերայ դրաստու, որ կտրեալ էին զկզակքն ի վերայ լանջացն: Եւ ընդեցուցին զքաղաքն ամէն եւ սպա սպանին:

Եւ արդ՝ ո՛վ եղբարք, եկայք արհնեսցուք զնախախնամողն Աստուած յամէն ժամ, զի ոչ թէ ծաղուպ փատշահն առաւել քրիստոնաւոր էր եւ վամ հայուն առաւել բարեկամ քան տաճկին, այլ զի ճշմարիտ՝ որ սիրտ ըռնաւորաց ի ձեռինն Աստուծոյ է: Զի թէ այնմին ա-

րեանն փոխան արեւն այն մեծ պարոնին Զ (6) զլիսաւոր տաճկի արեամբ շէր հեղեալ այնպիսի փայտառակ մահուամբ, իմայ, զի ազգս հայոց շնչեալ էր սրով յանօրինացն յամենայն տեղիս:

Կատարեցաւ աւագն Միրաք ի թվիս մերում Զ եւ ԼԵ (1486) ամին: Եւ է ստոյգ լծակից շարաշարանաց Փրկչին, զի մատուցեալ մեծի շորեքաբաթին զմատուցման տան պատուեաց եւ հաղորդելուն յաւագ հինգշաբաթին, զխորհուրդ մեծի աւուրն կատարեաց ընդ սրբազան առաքելոցն: Եւ շարաշարանօք մահուանն իւրոյ յաւուր մեծի ուրբաթին ըզշարաշարանօք խաչին Քրիստոսի մեծարեաց եւ պատուեաց եւ թաղմամբն ի գերեզմանի յաւուր մեծի շաքաթուն գթաղումն Քրիստոսի փառաւորեաց: Զի յաներեկ վիրակէին քիզալուտ Փրկչին յարիցէ փառօքն երկնային եւ արժանի լիցի անանց պատկին եւ լուսեղէն առագաստին: Եւ մանաւանդ զքատացող սորին զպարոն Մկրտչին եւ զծնօղսն իւր զպարոն Բաբին եւ զՄարգարիտն եւ զընդուն զնազու խանն. եւ ինձ մեղապարտ գրչիս Յակոբի կարդացողիս:

Յիսուս Քրիստոս ծառայեալ յամենայն(յ)ն մեղօք մեղուցե(ա)լ եւ անարժանս փոքր էի ամենայն կենդան(ե)անց: Տէր իմ Յիսուս Քրիստոս, մի՛ համարիր մեղք իմ առաջի քո, ամէն:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1բ.— Որոյ աղօթիւքն ողորմեա Քրիստոս, ստացողի սուրբ գրոյս՝ պարոն Մկրտչին եւ ծնողացն՝ պարոն Բաբին եւ Մարգարիտին եւ մեղապարտ գրչի սորա:

Թ. Ցա.— Որոյ աղօթիւքն ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոյս՝ պարոն Մկրտչին եւ ծնողացն՝ պարոն Բաբին եւ Մարգարիտին եւ անարժան գրչի սորա Յակոբ իրիցիս եւ կարդացողիս:

Թ. 24ա.— Որոյ աղօթիւքն ողորմի Քրիստոս ստացողի սուրբ տառիս՝ պարոն Մկրտչին՝ եւ ծնողացն՝ պարոն Բաբին եւ Մարգարիտին եւ անարժան գծողիս:

Տ. 33ա.— Ողորմէա Տէր նոյն ողորմութեամբն տառապեալ եւ գերեալ ազգիս հայոց, որ ողորմեցար նախահարցն՝ եւ աղատեցեր յամենայն վտանգից հոգոյ եւ մարմնոյ: Նա եւ զքատացող սուրբ տառիս՝ զպարոն Մկրտչին եւ զկողակիցն զՈւղտրիկն, որդին զՅակոբջանն եւ ինձ անարժան գրչի՝ Յակոբ քահանայի:

Թ. 52ա.— Որ ողորմի Քրիստոս Աստուած ստացողի սուրբ գրոյս՝ պարոն Մկրտչին եւ ծնողացն պարոն Բաբին եւ Մարգարիտին՝ եւ անարժան գծողիս՝ Յակոբ իրիցիս:

Ք. 61ա.— Այս ալսմաւորքս մենք Շուրիշկանայ եղած ժողովուրդս ստացանք մեր հայալ ընշիքս եւ տուաք ի ձեռն Տէր Մկրտիչ եւ Տէր Նիկիթայր քահանային, որ միշտ յամէն ժամ կարդան, մեզ եւ մեր ննջեցեւոցն յիշեն, եւ իւրեանք յիշեալ(ւ)ք լինեն առաջի անմահ գառին Քրիստոսի: Նշեւ թիւն ՌՄԽԹ (1800):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ես ծառայ Ղազարս Հերաշպետ գրեց, որ յիշատակ լինի, որ յիշի յիշեալ լինի առաջի անմահ գառին Աստուծոյ:

Ք. 101ա.— Թաշխար նախարարին թվին ՌՃՄԹ (1710) հրաշման արաւ իրաշ ամեն երկրի վերայ հայ եւ ղտաշխար ամեն ասկ շնչոյ գրութեան արաւ տարին ի Թէհրան հայ մարտայ...

Ք. 174ա.— Քրիստոս Աստուած ի գալստեան քում ողորմիս անարժան ծառայ Մարիամին, կարգա եւ դուացի, դու եւ լսող ժողովուրդ՝ թէ ինչպէս Քրիստոս պատուէր տուցն առաքեալներին կամ իւր մայրին: Կարգացողաց եւ լսողաց մասն եւ բաժան եղեց ամենայն ծառայ Մարիամ Հայրապետեան, ամէն:

№ 21

ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթեր՝ 223:— Պրակներ՝ 22, յուրաքանչյուր 12 թերթից:— Մեծուրյունը՝ 23X17X4:— Նյութը՝ դեղնագույն թուղթ:— Գրութիւնը՝ երկայուն:— Գիրը՝ բոլորգիր:— Տղերը՝ միջին հաշվով՝ 22:— Զարդագրութիւն՝ (Ք. 1ա) կիսախորան, դիմագրեր:— Վիճակը վերջից թերի, միջից որոշ թերթեր քայքայված, առանց կաղմի:— Գրիչը՝ Բասիլ:— Ժամանակը՝ 15-րդ դար:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Ք. 69ք.— Զստառանուն գծողիկա յիշել աղաչեմք ի մեղաց թողութիւն յատուր սոսկալի յարաթեան, Փրկչին մերոյ, զի թերեւ զտայցեմ... (թերի):

Ք. 113ք.— Զթարմատար եւ զկարեւելք փանաք եւ սուտանուն գծողիկա Բասիլ յիշել աղաչեմք ի մեղաց թողութիւն առաջի զենչոյն եւ միշտ կենդանոյն եւ յուսոյն իմոյ Քրիստոսի, ո՛վ սրբաւէր մանկունք նազելի մաւրն մերոյ Սիովնի եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոս:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ք. 115ք.— Արժանապատիւ Տէր Աստուածատուր Տէր-Ստեփանոսեան ի գեղէն Հաղարչեր, խոնար(հ) ծառայ արտագրող Աղաջան:

Ք. 120ա.— Սուտանուն գրող Աղաջան:

№ 22

ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթեր՝ 275:— Պրակներ՝ 23, յուրաքանչյուր 12 թերթից:— Մեծուրյունը՝ 21,6X17,1X7:— Նյութը՝ սպիտակ ողորկ թուղթ:— Կաղմը՝ թափածակ, արծաթապատ տախտակ:— Կաղմի վրա կան բեռագամ խաչ եւ եռանկյունաձև երկու հրեշտակների ու երկու արծիւների փորագրված պատկերներ:— Վիճակը՝ բավարար:— Գրութիւնը՝ երկայուն:— Տղերը՝ միջին հաշվով՝ 22:— Գիրը՝ բոլորգիր:— Զարդագրութիւն՝ ունի բազմաթիւ լուսանցազարդեր, թռչնազրեր, մարդազրեր եւ գազառազրեր: Ավետարանների սկզբներում նկարված են ավետարանիչների նկարները, իսկ տեքստը սկսում է խորաններով:— Ժամանակը՝ 1465:— Գրիչը՝ Հովհաննէս քահանա:— Վայրը՝ Արճիշ:— Պատվիրատուն՝ հայկում հաթուն:— Պահպանակ՝ սկզբում երկու պատրված մազաղայնա թերթեր բոլորձեւ երկաթագրով (Աստվածաշնչի նգեկեկի 36-րդ գլխից, որը հրատարակված բնագրերի համեմատությամբ ունի տարբերակներ):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ք. 273ա—275ք.— Փառք եզակի տէրութեան...

Արդ՝ որք զմտաց աշս անադաւտ եւ վրճիտ ունիցին Երկնանկատ յիտմամբ առ էական լոյս եւ իմանալեացն տեսարան, նոցին ո՛չ ինչ է փոյթ ինչ, որ յաշխարհի, այլ միանգամայն զհուր սիրոյն, զոր հուրն կենդանի արկ ի բանական բնութիւնս արւ արեւ արծարծեն յոգիս, անշիջանելի բորբոքմամբ հոգեւորացն տուրեւառութեամբ, որով եւ լուսաւորին ըստ բանի աստուածահայր մարգարէին, որ ասէ. Պատուիրանք Տեառն լոյս են եւ լոյս տան աշաց:

Արդ՝ ըստ այսմ պատուիրանի, ցանկացաւ եղեւ աստուածային սուրբ եւ անտաբեր անտարանիս ողորմելի եւ դառնացեալ կիներն հալիմ հաթունն: Եւ ստացաւ զփարթաթ հարստութիւնս՝ զաստուածաբան սուրբ անտարանս, հիշատակ իւրն եւ բարի զաւակին իւրոյ՝ քեղեցիկ եւ քաղցրատես երիտասարդին՝ Կարապետին, որ քնաց ուրախութեամբ ի քաղաքն Սուրբանիս եւ ի դառնալն ի տուն, մատնեցաւ ի ձեռս արեւմտադարեւ ջալատ տաճկաց, որ ամմեղ նահատակեցին սրով եւ խանջաւով: Եւ ո՛ր լնդու կարէ պատմել զանմեղ ապանումն Կարապետին, որ էր նոր փեսայ:

Եւ հարաթամահ նահատակեցաւ նոյնպէս եղբայր նորին՝ Խոջայ Յօհաննէս՝ երիտասարդ հասակաւ եւ նա լիսպահան սրով սպանաւ ի ձեռաց անաւրէն հարամկաց: Եւ էր նա երկիւղած յԱստուծոյ եւ զԾ (5)

ուր առաջադրաց պահոցն անստույգ անցուցանելու

Այլ եւ միւս փոքրիկ որդոյն՝ Էդդանքախշին, որ եւ նա տղայ հասակաւ զնաց ի վաճառ յարեւելս, եւ դարձան ուրախութեամբ, եւ ի հասանելն ի Թալիքէզ, ցաւ մահու դէպաւ եւ յԱստուած փոխեցաւ:

Եւ ողորմելի հայր սոցա Գրիգորն, խոցարտով եւ դառն կենաւք, զնաց տարադէմ յապահան վասն որդոյն Յօհանիսին եւ ի դառնալն հեծեծանօք կսկծամահ եղև ի Սօլթանիս:

Այս ողորմելի կին խալիմ խաթման զայս ամենայն անասնի կսկիծա տեսեալ, եւ լալով զաւուրքն անցուցեալ եւ զյոբան յԱստուծոյ ոչ հատեալ, ստացաւ զտէրունեան սուրբ աւետարանս յիշատակ իւրն եւ ծնողացն՝ Ստեփանոսին եւ Նազմէլէքին, եւ ատն իւրով՝ Մարտիրոսին եւ Գրիգորին, եւ կենդանի որդոյն՝ Յօհանիսին, եւ եղբորն՝ պարոն Կորգին, եւ դստերն՝ Գուլփաշին եւ ամենայն արեան մերձաւորաց նորին: Լի բերանով եւ ուլիղ արտիւ Աստուած ողորմի ասացէք դառնացեալ կնոջն՝ խալիմին եւ զեղեցիկ նահատակ որդոցն՝ Կարապետին, Յօհանիսին եւ Էդդանքախշին եւ Գուլփաշին եւ հօրեղբօրն՝ Մարգարին եւ ամենայն արեան մերձաւորաց նորին՝ կենդանաց եւ մեռելոց, ամէն:

Այլ եւ ես անարժանս ի մանկունս եկեղեցոյ Յովանէս քահանայ, ըստ իմով տկարութեանս յանձն առի զսուրբ աւետարանս եւ ասարտեցի կամամա Աստուծոյ քիթուականութեանս հայոց ԶԺԴ (1465) ամին ի քաղաքս, որ իրոյ Սրճէս, ի դռնս սուրբ տաճարիս Գէորգայ զօրավարի:

Յայսմ ամի սպան շարաշար Զհանշահ փառաշահ զորդին իւր զՓիլոպուտախ խանն ի Բաղդատ եւ եկն ի Թալիքէզ ի թաղթն: Եւ են աթոռ եւ եպիսկոպոս երկրիս Քաջբերունոյ իմաստուն եւ բանիւրուն վարդապետն Ստեփանոս եւ Տէր Յովանէս արհիպիսկոպոսն: Եւ տանտառէրք քրիստոնէից՝ պարոն Բախշախին եւ Խօջայ Մահլամն: Յայսմ ամի գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Յովանէս քահանայի, վասն որոյ միաբան Աստուած ողորմի ասացէք անարժանիս եւ ծնողացն իմ՝ Մանկասարին եւ Փաշին եւ կենակցին իմոյ Շուքրանին, որ յայս ամի փոխեցաւ ի Քրիստոս, Եւ Տէր Աստուած ձեզ լսողացոյ, եւ կարգացողացոյ եւ Աստուած ողորմի ասողացոյ, տացէ զիւր երկնից արքայութիւնն ձեզ եւ ձեր ծնաւորացն եւ արհնեացէ ձեզ եւ զարդարեացէ յայս կենալքս որդովք եւ յայն կենալքն՝ հոգով, ամէն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ք. 275ա—275բ.— Փառք ամենասուրբ երրորդութեան...

Արդ՝ զվերջի ստացող սուրբ յանտարանիս՝ Տէր Մարգարէն, որ ստացաւ ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ իւր եւ ծնողացն իւրոց՝ հարն Խաւալ, Եստիրեկին եւ մարն նորա՝ Հանմելիքին, եւ եղբարցն՝ Խաւալ Աստուածատուրին, Ամիրզդտին եւ կողակցին Շուշանին եւ հարսին իմոյ՝ Անայմելիքին, Եանդիկին, եւ յարեան մերձաւորքն իւր յիշեցէք ի Քրիստոս:

Եւ որդոցն՝ Յովհանէսին, Մկրտչին եւ դստերն Սուղմերն եւ եղբարդորդոցն՝ Փաշին, Եահրամիքին, եւ դստերացն՝ Գուլեմիքին, Մարիամին, Գաւալաղին: Եւ արեան մերձաւորքն իւր յիշեցէք ի Քրիստոս, եւ Աստուած ձեզ յիշէ, ամէն:

Ջնորգող սուտանուն Աղարիս, (յ)իշեցէք ի Քրիստոս եւ Աստուած ձեզ յիշէ, ամէն: Արդ՝ աղաչեմ ձեզ, ո՛վ սուրբ քահանայք, յորժամ հանդիպէք ի սմա՝ կարգալով կամ արեանակիւով, լի բերանով Աստուած ողորմի ասացէք եւ Աստուած ձեզ ողորմի, ամէն:

№ 23

ԱԻՏԱՐԱՆ

Քերեբը՝ 308:— Պրակեբը՝ 26, յուրաքանչյուրը 12 թերթից:— Մեծուրյունը՝ 20×14×6,8:— Նյուրը՝ թուրք:— Կազմը՝ կաշեպատ տախտակ, կարմիր մետաքսով ծածկած: Կազմի վրա ունի խաչիկութեան պատկերը արծաթից:— Վիճակը՝ առանձին թերթեր պահված են, վերջից ընկած են թերթերը:— Գրույունը՝ երկույն, բոլորգիր:— Տաղերը՝ միջին հաշվով 21:— Զարդագրույունը՝ կան թանաքեր եւ լուսնացազարդագրութիւններ: Գլխագրերը զարդանկարներով են: Ունի խորաններ եւ ավետարանիչների 3 նկարները:— Դրելը՝ Հայրապետ քահանայ:— Գրույուն վայրը՝ Շոշ քաղաք (Սպահան):— Թվականը՝ 1631:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ք. 306բ.— Եւ արդ՝ ես, յետինս ի բանականաց եւ առաջինս ի շարասիրաց, եւ անիմաստս ի գրչաց, Հայրապետ սուտանուն քահանայ, քանզի իմ հրաման առեալ ի պատուիրանայդի արաքելոցն քանէ, որ ասէ. Յոր վոշումն կոչեցար, ի նմին վացջի: Եւ արդ՝ իմ ոչ բերելով յանձին, այլ ոմնայնացեալ յամենայն բարեաց գործոց եւ թափուր մնացեալ, այլ յուսամ ի մարդասիրութիւն Աստուծոյ, զի առատ է եւ սպասեմ վարձու յետին մշակին:

Արդ՝ գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականիս հայոց ՌԶ (1631), ձեռամբ Հայրապետի սուտանուն քահանայի, անխմաստ եւ ախմար գրչի: Զի իմ անընդունակ գրող յարոնաստ գրչութեանն, այլ եւ բազում մեղաց ցնորիւք պաշարեալ եւ շրջապատեալ, այլ ըստ կարի մերում, զոր պարգեւեաց մեզ շնորհաբաշխ Հոգին: Բազում աշխատու-

Ռեալը գրեցար, անարժան յամենայնի եւ ամենայն շարիք շաղախեալ ձեռաւք ի քաղաքս Շաւշ, որ կոչի Ասպահան, առ ոտն սուրբ Յակոբայ Մծղնայ հայրապետին: Բ հայրապետութեան հայոց Տեառն Մովսէսին, ի յառաջնորդութեան մերոյ աղգիս քաջ րաբունապետ հաշատուր եպիսկոպոսին, Տէր Աստուած հաստատուն պահէ, ամէն:

Եւ արդ՝ ես Հայրապետ շանարժան քահանայս, որ անուամբ միայն նմ եւ ոչ գործով, ցանկացաւ եղէ սուրբ աւետարանիս եւ մեծ ջանիւ եւ սիրով գրեցի, յիշատակ հոգոյ իմոյ եւ ծնողաց իմոց՝ Նուբիշանին, Նդիսաբէթին եւ ամենայն արեան մերձաւորսն իմ, ամէն: Այլ եւ աղաչեմ յիշել ի Քրիստոս զքոջ մամն իմ զՍլիմն եւ զորդին իւր հանգուցեալ ի Քրիստոս Հայրապետն: Ընդ նոսին յիշել ի Քրիստոս աղաչեմն զհօրեղբայրն իմ Գովգալի եւ կողակիցն իւր Գալիկն եւ որդիքն իւրեանց, ամէն: Դարձեալ, յերեսս անկեալ աղաչեմ, որք ճաշակիք յաստուածային բուրաստանէս եւ յամենայն սեղանոյս: Եւ որք պատահիք մամ տեսութեամբ եւ վրամ ընթերցմամբ, յիշեցէ յաղօթս ձեր զանախոսան գծողս Հայրապետ քահանայս եւ զամուսնին իմ Մարիամն եւ նորաբողոք որդին իմ Բաղդասարն: Եւ որ յիշէ, ինքն յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, ամէն: Դարձեալ աղաչեմ յիշել ի Քրիստոս զպապն իմ՝ Հայրապետն եւ կողակիցն իւր Մինայիսան եւ զորդիքն եւ ամենայն արեան մերձաւորքն իւրեանց, ամէն: Ընդ նոսին յիշել ի Քրիստոս Ստեփանոս քահանայն, որ երկն-երկին եւ երանգ-երանգ փունով գորդարեաց զաւետարանս, զոր Տէր Աստուած զարդարեաց զհոգի նորա եւ ծնողացն իւրոց, մանաւանդ, որ երախտիք ունի ի վերայ սուրբ աւետարանիս, զոր Տէր Աստուած զվարձս բարին հատուցանէ ի միւսանդամ գալստեանն, ամէն: Եւ արդ՝ ես յոյլ եւ ծոյլ, պղերգ եւ թափուրս ամենայն առաքինութենէ, Հայրապետ եւ սեւերես քահանայն այս ետու ընծայ սուրբ աւետարանս ի դուռն սուրբ Յակոբին անշինջ յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց եւ զազգայինս իմ ամենայն, զվերոյգրեալսն ի մամ, մանաւանդ յիշել, եւ Աստուած ողորմի ասել եւ մեղաց թողութիւն խնդրել առաջի զենլոյ անարատ պարինն ի ժամ սոսկալի եւ մեղսաքաւիչ սուրբ պատարագին: Եւ որ յիշէ, եւ ինքն յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է արհնեալ յաւիտեանս; ամէն: Հայր մեր...

ՀԻՇԱՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 137ա, 1873.— Սոյն ահաւոր եւ հրաշալի սուրբ աւետարանս գնացատեալ եղեւ եւ իմս յօթարկան կամաս ծախսի ետու ի Յոհան Սաղաթիէլին եւ նոյ

արոր զսուրբ աւետարանս արծաթագատ, առ ի յիշատակ հանգուցեալ որդին իւրոյ Մուրադին եւ Մեկրունին՝ լինի անմասն եւ զեռահաս որդոց իւրոյ եւ աշխարհէս (!) Վասնորոյ մեր առանց տրտունջ թողաք ի յիշատակ նորին: Ով որ հանգիպի, առանց խնայելոյ յիշեացէ զնայ եւ մեր միշտ ունիմք առ ի յիշել աղօթուր Տէր Ստեփանոս Տէր Յոհանէսի:

№ 24

ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթեր՝ 266:— Պակեներ՝ 22, յուրաքանչյուր միջին հաշվով 12 թերթից:— Մեծուրյունը՝ 22,5X16X7:— Նյութը՝ փոքր ինչ զեղնած ողորկ թուղթ:— Կազմը՝ տախտակ՝ երեսին հինգ խաչեր, որոնցից մեկը մեծ՝ ամբողջ կազմի մեծութեամբ, մյուսները չորս փոքր կողքերում: Խաչերի վրա կան տասը հատ ակեր: Մյուս երեսին կան դարձալ հինգ խաչեր, որոնցից մեկը մեծ, մյուսները փոքր: Այս երեսին կան երկու ակեր: Ներսից փակցեւած է մետաքսե գծավոր կտոր: Խաչերի վրա կան հետեւյալ փորագրութիւնները.

«Սուրբ խաչս յիշատակ է Փարիխանին, կողակից՝ Տէր Ստեփանոսին, հայրն՝ Մարտիրոսն, մայրն՝ Մարիամն, Թվին Ռձի՛ (1678), Տէր Պետրոսին»:

«Սուրբ խաչս յիշատակ է Ովանիսին, կողակիցն՝ Սուղուսին, Թվին Ռձի՛ (1678)»:

«Սուրբ խաչս յիշատակ է Առաքելին, կողակիցն՝ Մարտիրոսին, Թվին Ռձի՛ (1678)»:

«Յիշատակ է Յոհաննին, Մեհրապին, Շահումին, Մարտիրոսին: Թվին Ռձի՛ (1678)»:

«Սուրբ խաչս յիշատակ է Շուշանին, Ակորջանին: Թվ. Ռձի՛ (1678)»:

«Սուրբ խաչս յիշատակ է Առաքելին, կողակից՝ Աւգականին եւ Տէր Ոսկանին, հոգու հատոր Տէր Ստեփանոսին: Թվին ՌձԾԹ՝ (1710)»:

«Սուրբ խաչս յիշատակ է Առուսին... Թվին ՌձԼԲ (1683)»:

«Սուրբ խաչս յիշատակ է Վարդանին քահանային: Թվին ՌձԼԲ (1683)»:

«Սուրբ խաչս յիշատակ է հոգուն՝ Նաթանին: Թվ. Ռ...»:

Վեճակը՝ բավարար:— Գրությունը՝ երկնյուն:— Տողերը՝ միջին հաշվով 22:— Գիրը՝ գեղեցիկ բոլորգիր:— Զարդագրութեան՝ կան կիսախորաններ, խորաններ, թռչնաբեր, լուսանցազարդութիւններ եւ չորս ավետարանիչների նկարներ, ոսկով եւ երկնեանգ գույներով: Մանրանկարչական մեծ արժեք ներկայացնող ձեռագիր է:— Ժամանակը՝ ՌձԶ (1627):— Գրիչը՝ Ստեփան սարկավագ:— Մաղկոթը՝ Մկրտիչ:— Վայրը՝ Հալեդ, Քառասուն մանկանց եկեղեցի:

ՀԻՇԱՍԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 82ա—բ.— Զմեղապարտ գծող սարկավագ Աստուածատուրս յիշեցէք ի Քրիստոս եւ մեղաց թողութիւն հայցեցէք, եւ դուք յիշիք

ի Քրիստոսէ, ամէն: Գրեցաւ թվին ՌՁԶ (1627): Յիշեցէր զմահոյսի հայրն իմ՝ Կարապետն ի Քրիստոսս:

Թ. 130ա, ներքին լուսանցքում, կարմիր մեկանով, մանրագիր. —

Այս Ղովասոս եղն ասացին,
Որպես նա՝ իսկ հերկէ զգետին,
Կրկին անխոնճ վասն պողին,
Սոյնպէս երկարեն բանք սորին,
Եւ անարժան ծաղկող սորին,
Ջձեղ աղաչէ ողորմագին,
Ջի թողութիւն հայցել սմին
Ի սակ սրտի գտէր ողորմին:

Թ. 206ա. — Այս Յովհաննէս արծուանման, Թռեաւ մտօքն անհասական,
Առ ի պատմել որոց մարդկան,
Ջանճառ քիցս հանրական,
Եւ աս ծաղկողս անարժան,
Որ եւ Մկրտիչ կոչեմ անուան,
Ջեղկելիս արէր յիշման արժան,
Եւ ձեղ աւրհնէ անմահ արքան:

Թ. 261ա—264ա. — Փառք անմահի... Որ յանգ հանել հիւծելոյս յանցանօք անպիտան եւ մեղաւոր գրչիս՝ Աստուածատուր դպիրս, որոց աստուածամուկ բանից գրել արժանի արար զիմա անարժանութիւն, քանզի սկսեալ կատարեցի Աւետ անուն երանութիւնս, ի թվականիս ՌՁԶ (1627), ի քաղաքն Երեւանայ, որ թարգմանեալ կոչի Հալապ, ի սուրբ Երուսաղեմայ Հոգոց տունն, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածին եւ սուրբ Քառասունք եկեղեցեացս, որոյ շնորհօքն Աստուծոյ աւարտեցաւ եռահարաշ եւ հոգեազարդ սուրբ աւետարանս... Եւ յիշեալ զբանն Յիսուսի, զոր տալր ասացոյց զխորհուրդ վերնոյն եւ զգործ հոգեւոր զառաջան ակօսին եւ ըզպտորակայան, եւ զմարմնաւորսն ի յետոյս առակէր, նա եւ խորհեալ զգիր հնոյ կտակին, որ ասէ՝ Երանի՝ որ ունիցի դաւակ ի Սիոն եւ ընտանեակ յԵրուսաղէմ: Ջայս ամենայն, այլովք հանդերձ, ի խորհրդակիր սենեակն իւր կրեալ վերոյիշեցեալ հավատարիմ ծառայն Քրիստոսի մահոյսի Աղամիրին, հայրն իւր՝ Առաքելն, մայրն իւր՝ Սօլթանիաշէն, լուսով լցուի իւրեանց հոգին: Եւ առաւել Ոսկէ, որ ամուսին է Աղամիրին, այլ եւ ուրդեր եւ դուտոր սորին՝ Պետրոսն, ընդ Խոսրովիթուլիթին, Օղլանքերաք ընդ Թաթուհուն, Եղիսաբէ ընդ Ջադային:

Սա յիշատակ անշնչելի,
Բարի զաւակ հոգոց նոցին:
Յորժամ որ գայ Տէրն երկնային,
Անճառ փառօք իւր հայրենին,
Նստի յաթոռ դատաստանին,
Արեւի դիւան մարդկան ազգին:

Յայնժամ աշաւքն քաղցրագին
Նայի սիրով յանձն սոցին,
Եւ բարբառովն աստուածային,
Կոչէ ի վեր ընդ հաւտապետին:
Եւ անարժան ծաղկող սորին,
Յոյժ աղաչեմ զտէրն երկնային,
Վասն պատճառ լինողացն սուրբ
աւետարանին,

Ջի թողութիւն տացէ սոցին,
Եւ դասացէ ընդ անմարմին:

Մանաւանդ պարտ է մեզ տրուալ գրչիս յիշել եւ գրել, զի որք հանդիպին սուրբ աւետարանիս, յիշեն զհաւատարիմ բարեկամքն մեր, նախ՝ հայրն իմ Սովսէսն եւ երկրորդ՝ հոգեւոր եղբայրքն իմ՝ Սուլթանոսն եւ Ապտուլան, Պաղէրն եւ Շահվալին, զի զանարժանս հանապազ խնամաւք պահեցին ի մէջ պանդուխտութեան մինչեւ ցայժմ, զոր եւ խնդրեմ ի խնամակալ թագաւորէն խնամօք պահէ զնոսա մինչեւ ի ճերտութիւն, ամէն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 128բ—129ա. — Ով դասք բահանայից, որք հանդիպիք սուրբ աւետարանիս, յիշեցէր զսուրբ Ստեփանոս եկեղեցու բահանային, զի ի ծաղկել աւետարանիս հոգեւորապէս հանգուցին եւ սիրով խնամեցին զտրուալ Մկրտիչ դպիրս. Բանն Աստուած Որդին միածին հաստուցանէ ի ժամ արդար հատուցման եւ ընդ սուրբ բահանայիցն դասէ, ամէն:

Թ. 264ա. — Ջվերչին տացող սուրբ աւետարանիս զՏէր Ստեփանոսն եւ զԾնողսն իւր՝ զՄիխայիլ եւ զՏաֆարն, եւ զեղբարսն իւր՝ Առաքելն, որ հանգուցեալ է առ Քրիստոս, եւ զԿարապետն, զԿիրակոսն, զՃարութիւնն, զԱղամարն, եւ զորն Շամամն յիշեցէր, եւ զկողակիցն Տէր Ստեփանոսի՝ զՓէրիսանն, եւ զհամբուցեալ որպիսն՝ Մեսրոպն, Յեսային, զուստրն Խանթուշն: Այլ եւ զկենդանի իւր՝ զՄիխայիլ եւ զՏէր Աստուած ընդ երկայն աւուրս պահեցէ. Դարձեալ յիշեցէր զՏէր Ստեփանոսն եւ զհոգւորդին իւր զՏէր Ոսկանն յիշեցէր ի Քրիստոս: Դարձեալ յիշեցէր զՏէր Ստեփանոսն, որ ստացաւ զսա ի հալալ վաստակոյ իւրոց եւ յիշատակ իւրն: Եւ ով որ անարժանի զսուրբ աւետարանս վաճառել կամ գրաւել, ընդ Յուդայի եւ ընդ խաչահանացն, ընդ Անեայի եւ ընդ Կայ (Խա)փայի պատիժն առցէ այժմոս մարմնովն եւ հանդերձեալն հոգովն ի հոգրն զհեկնին առցէ բաժին, եւ Տէր Ստեփանոսն մասն ի Քրիստոսն առցէ այժմ եւ յաւիտեանս անգրաւ, ամէն: Հայր մեր...

Դարձեալ յիշեցէր զՓէրիսանն եւ զԾնողսն իւր Մարտիրոսն, զՄարիամն եւ զեղբայրն Յոհանն, որ են հանգուցեալ ի Քրիստոս, եւ զկենդանի եղբարքն՝ Մարութանն, զԿարապետն, Տէր Աստուած ընդ երկայն աւուրս պահեցէ, ամէն:

Թ. 264բ. — Դարձեալ յիշեցէր Փարիսանն, որ հոգեւոր ի Քրիստոս թվին ՌՁԾԳ (1704):

№ 25 ԱՒԵՏԱՐԱՆ

Քերթերը՝ 253.— Պրակնեքը՝ 24, յուրաքանչյուրը միջին հաշվով 12 թերթից։— Մեծուրյունը՝ $16,5 \times 12,5 \times 6$ ։— Նյութը՝ զեղնավուն թուղթ։— Կազմը՝ կապույտ թավապատ տախտակ։ Առաջին կազմի վրա թիթեղի տակ փակցված է կարմրագույն խոշոր ափս— Վիճակը՝ բավարար (առաջին թերթի կես մասը պատռված է)։ Գրությունը՝ հրկայուն։— Տողերը՝ 19։— Գծումներ՝ ճնշումով։— Գիրը՝ բոլորգիր։— Զարգացումը՝ ունի խորաններ, կիսախորաններ, ծաղկազերեր, կենդանազերեր, թռչնազերեր, լուսանցազարդություններ և ավետարանիչների նկարները։— Գրիչը՝ Պողոս։— Մաղկաղը՝ Հակոբ Դպիր։— Ժամանակը՝ ՌՃԺԳ (1664)։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 30թ.— Յիշեսչիք ի մաքրափայլ յաղաթա՝ ձեր գծադիվող ստրա՝ զՅակոբ Դպիր(ը)ս, զի եւ դուք յիշեալ լիցիք, ամէն։ Հայր մեր...

Թ. 283թ.— Փառք ամենասուրբ երրորդութեանն...

Արդ՝ սկիզբն եղեւ սուրբ աւետարանիս ի յերկիրն պարսից, ի քաղաքն Շօշ, որ է Ասպահան, ի դուռն սուրբ Աստուածածնին, ի թվաբերութեանս Հա(յ)կազ(ե)ան տոհմիս ՌՃԺԳ (1664) ամի, ի հայրապետութեան Տեառն Յակոբայ սուրբ յաթոռոյն էջմիածնայ։ Վասն որոյ աղաչեմ զամենեանս զվալելօղսդ և հանդիպօղսդ այսմ գրոց ի խնդրոյ բարեմիտ եւ հեզահոգի ուստա Պօղոսին և կողակիցն Անախաթուն եւ հոգոյտրդի Հազիխանն եւ Հազարվարուն, ամէն։

Դարձեալ յիշեցէք ուստա Պօղոսն եւ ծնօղսն՝ Կիրակոսն, Եթարն։ Յիշեցէք իւր կրկին անգամ յիշեցէք Պօղոսն եւ եղբարքն՝ Պետրոսն, Տիւաքն եւ հանգուցեալ եղբայրն՝ Խաչատուրն, քերքն՝ Նուրիխան, Շաղոսկին, յիշեցէք ի Քրիստոս Աստուած։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 3ա.— Ես Յամբարն այս սուրբ աւետարանս առայ իմ հայալ վաստակոցս յիշայտակ իմ եւ իմ ծնողացս որպիս իմ Գոյադին, որ է Աստուած երկար ա՛մօք պահեսցէ։ Էր թիվն ՌՄՁԳ-ումն (1834) եղեւ վերջ։ Եւ թոռն իմ Վարթումէ։

№ 26 ԱՒԵՏԱՐԱՆ

Քերթերը՝ 256։— Պրակնեքը՝ 21, յուրաքանչյուրը 12 թերթից։— Մեծուրյունը՝ $20 \times 14,5 \times 7,5$ ։— Նյութը՝ զեղնած թուղթ։— Կազմը՝ կաշկապատ տախտակ, արծաթյա երկու բռնակներով։ Երկու երեսները արծաթապատ, առաջինի կենտրոնում կա արծաթյա խաչ, յուրաքանչյուր թեկ վրա մի փոքրիկ ափ, իսկ կենտրոնում մի խոշոր կարմրագույն ափ։ Առաջին երեսի վրա շղթաներով կախված են վեց փոքրիկ խաչեր։ Նույն երեսի վրա փակցված են տասներկու հրեշտակների

ձուլածո նկարներ։ Երկրորդ երեսի կենտրոնում փակցված են մի խաչ և տասներկու հրեշտակների զխիկներ։— Վիճակը՝ բավարար, սակայն վերջից պակասում է մի բանի թերթ։— Դուրյունը՝ երկայուն։— Տողերը՝ 21։— Գիրը՝ բոլորգիր։— Զարգացումը՝ լորս ավետարանիչների նկարները, կան կենդանազերեր, թռչնազերեր, մարդազերեր, լուսանցազարդություններ և կիսախորաններ։— Ժամանակը՝ 16-րդ դար։— Պահպանակ՝ սկզբում երեք թերթ, իսկ վերջում՝ երկու։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 74ա.— Դարձեալ յիշեցէք զՏէր Դաւիթն եւ զկողակիցն իւր՝ զԴաւաթն եւ զհարազադ որդին իւր՝ զՏէր Պետրոսն եւ զկողակիցն զՇաղիկն եւ զզուտուն՝ Ազատմէլիքն, եւ զհանգուցեալ որդին՝ զՄէլքիսէթն եւ զզուտուն՝ զՀասիկն, և զորդին իւր՝ զԱւետիքն եւ զնեքսէն եւ միւս որդին՝ զՊաւլոսն, եւ զկողակիցն զՍաւլոսն եւ զզուտուն՝ զՍաթիկն, որ հանգուցեալ են առ Քրիստոս։ Եւ նորեն ծալ դուտուն՝ զԱրդրիկն եւ միւս որդին՝ զՄարտիրոսն, եւ զկողակիցն զԿարգասիկն եւ զզուտուն՝ զՄարիամն եւ զորդին՝ զՎարդեան, եւ զմիւս որդին՝ զԴինոս սարգաւաճն եւ զզուտուն՝ զՇաղիկն եւ զԿարդեան, եւ զայլ ամենայն արեան մերձաւորսն յիշեցէք ի Տէրն Յիսուս, եւ դուք յիշեցեալ լիցիք ի միւս անգամ դալստեանն իւրում։ Գրեցաւ սակաւ յիշատակս ի Ռկն (1616) թվին հայկազեան տումարին, ձեռամբ՝ Զաբարայ վանեցոյ իրիցոս։

Թ. 119թ.— Տէր Օհանի ձեռքով՝ ավետարանի կոստղելու մասին Գեշնիկան գլուղում ՌԹԿԲ (1813) թվին։

Թ. 120ա.— Ղվերչին ստացաւ նուրբ աւետարանիս զՏէր Մելքիսէթն բահանայն եւ զորդին իւր՝ զՏէր Դաւիթն, զՎարդեան եւ ամենայն մերձաւորացն, ամէն։ Արդ՝ ցանկացաւ եղեւ սուրբ աւետարանիս կոստղելն զՏէր Մելքիսէթն, կողակիցն իւր՝ զՎարդեան, հարազատ որդին իւր՝ զՏէր Դաւիթն, կողակիցն իւր՝ զԴաւաթն, միւս որդին՝ Վարդեան, կողակիցն՝ Եղսիկ, զստերն իւր՝ Ազատմէլիքն, Խասիկն, Ազիզն, Սաթիկն, ծնաղն իւր՝ Հազարէն, իւր կողակիցն՝ Ուղիսէն, եղբարն իմ՝ Աստուածատուն, Ոսկիկն, որ կարճաւրայ փոխեցան առ Քրիստոս։ Դստերն իւր՝ Նուպկար, Գուլմարիփար, Եղսիկն, իւր հոգոյորդին՝ Յովաննէսն, բոլորն իմ՝ զՇահափաշէն, Վարդիթուն, Խաթունփաշէն, Ժոնիկն, իւր հանգուցեալ որդիքն՝ Սէթն, Սիմէոն, Սարգիս, Պետրոս եւ այլ ամենայն մերձաւորացն, կենդանացն եւ նշեցելոցն, ամէն։ Ի թվականիս ՌԼ (1581), Գրեցաւ գիրս ձեռամբն անարժան Յակոբ եպիսկոպոսի, ամէն։

Թ. 255ա.— Ավետիք Դասպարյանի եւ Գ. Մելքոնյանի ձեռքով՝ ավետարանը Տէր Խաչատուր Տէր Անտոնյանին հանձնվելու վերաբերեալ, 1880 թ. որը հաստատում են իրենց կնիքներով։

Թ. 255թ.— Անտոնի որդի Օհանի կողմից՝ ուղևորվում է ձեռագրի տեսքում աղավաղում կատարողներին։

(Շարունակելի)